ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 սեպտեմբերի 2020 թվականի N 225- Ա

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 28-Ի N39-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ, «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածների և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 18-ի «Վտանգավոր տարածքից բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանման կարգը հաստատելու մասին» N1180-Ն որոշմամբ հաստատված կարգի 14-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության Վայոց ձորի զինվորական կայազորի պետի համաձայնությունները.

ո ր ո շ ո ւ մ եմ՝

1. Հաստատել արտակարգ իրավիճակների ժամանակ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի բնակչության տարահանման պլանը՝ համաձայն հավելվածի,
2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզում արտակարգ իրավիճակների և ռազմական դրության ժամանակ բնակչության տարահանման հանձնաժողովի նախագահին՝ ապահովել պլանով նախատեսված գործառույթների իրականացումը,
3. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Սյունիքի մարզպետի 2014 թվականի մարտի 28-ի «Արտակարգ իրավիճակների ժամանակ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի բնակչության տարահանման պլանը հաստատելու մասին» N39-Ա որոշումը:

24.09.2020

X

ՀՈՒՆԱՆ ՊՈՉԻՈՍՅԱՆ

Подписано: POCHOSYAN HUNAN 14905640117

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Հ. ՊՈՂՈՍՅԱՆ**

2020թ. սեպտեմբերի 24
ք. Կապան